ԱՂԵՏԻ ԳԻՏՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Ա. Վ. ՍԻԼԻԼԵԱՆՅԱՆ

1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը ոչ միայն մարդկային կյանքեր խլեց, այլև մեծ ավերածություններ առաջացրեց Հայաստանի հյուսիսային շրջաններում։ Աղետի գոտին ընդգրկում է հինգ մարզեր, որտեղ ամբողջությամբ քանդվել կամ լուրջ վնասվածքներ են ստացել պետության պահպանության տակ գտնվող հնագիտության, ճարտարապետության, արվեստի և պատմության բազմաթիվ հուշարձաններ։

Հայաստանը այն եղակի երկրներից է, որտեղ առ այսօր կան անգամ վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի հուշարձաններ, որոնք ոչ միայն հայ ժողովրդի հպարտությունն են, այլ նաև պատկանում են համայն մարդկության մշակույթին։ Հայաստանի վաղ միջնադարյան պաշտամունքային շինությունները ըստ հատակագծային և ծավալատարածական լուծումների բաժանվում են հետևյալ տիպերի.

1. միանավ և եռանավ բազիլիկաներ,

2. կենտրոնագմբեթ և խաչագմբեթ եկեղեցիներ,

3. բազմակողմ և կլոր եկեղեցիներ։

Վաղ միջնադարյան եկեղեցիների հատակագծային և ծավալատարածական ավանդական լուծումները կրկնվեցին միջնադարյան վանքային համալիրներում։ Միջնադարյան վանքային համակառույցները նշանակալից դեր են կատարել հայ հոգևոր և մշակութային կյանքում։ Վանքային համակառույցները բաղկացած են տարբեր նշանակության եկեղեցական (եկեղեցի, գավիթ, զանգակատուն) և քաղաքացիական (դպրոց, գրատպարան-մատենադարան, սեղանատուն, բաղնիք, աղբյուր) շինություններից, որոնք տարածական և գեղարվեստական ամբողջություն են կազմում՝ նեղդաշնակերով շրջակա ռելիեֆին։ Համակառույցներն եկեղեցիները հիմնականում խաչագմբեթ են։ Քաղաքացիական շենքերն իրենց արտահայտչականությամբ, ճարտարապետական մտահղացումով համահնչուն են եկեղեցական շինություններին, որոշ դեպքերում նույնիսկ իրենց կնիքն են դրել վերջինների ճարտարապետության վրա։ Շինությունների արտաքին տեսքը հարստացվել է զանազան գեղարվեստական արտահայտամիջոցներով՝ քանդակներով, որմնանախշերով և պլաստիկ դարդանախշերով։

Երկրաշարժի գոտում պետական հաշվառման են վերցված հետևյալ հուշարձանները.

Թիվ	Քաղաք, մարզ	Հնագիտության հուշարձան	Ճարտարապետական հուշարձան	Արվեստի հուշարձան	Պատմության հուշարձան	Ընդամենը
1	Գյումրի	2	630	5	5	1672
2	Դիլիջան	25	60	381	5	471
3	Ստեփանավան	380	223	609	113	1325
4	Արագածոտն	278	161	456	65	963
5	Լոռի	517	443	1397	123	2480
6	Տավուշ	211	180	723	70	1184
7	Կոտայք	93	107	220	30	450
	Ընդամենը՝	1506	2837	3791	411	8545

8545 հուշարձաններից 289-ը ունեցել են միութենական նշանակություն, 2512-ը՝ հանրապետական, 5738-ը՝ տեղական։ Դրանցից 2837-ը՝ ճարտարապետական, 1506-ը՝ հնագիտության, 411-ը՝ պատմության, իսկ 3791-ը արվեստի հուշարձաններ են։ Աղետի գոտում է գտնվում հայկական միջնադարյան ճարտարապետության մարգարիտը՝ Երերույքի բազիլիկան (Շիրակ), որը կառուցվել է V գ.։ Այս շինությունը Հայաստանի եռանավ բազիլիկաների դասական օրինակներից է։ Կենտրոնական նավը արևելյան մասում ավարտվում է կիսակլոր աղոթարանով։ Բոլոր երեք նավերը կիսագլանաձև թաղերով են, իսկ տանիքը երկթեք էր՝ ծածկված կղմինդրով։ Դարերի ընթացքում տաճարի ծածկը և պատերի վերևի մասերը քանդվել են։ Երերույքի բազիլիկան աչքի է ընկնում ճարտարապետական մասերի (մուտք, սյուների խոյակներ, պատուհաններ) բարձր գեղարվեստական ճաշակով, տարածածավալային պարզությամբ։ Երկրաշարժի հետևանքով Երերույքի բազիլիկան լուրջ վնասվածքներ է ստացել, սակայն հրաշքով կանգուն է մնացել։

Վթարային վիճակում են գտնվում նաև Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղի Մարմաշեն վանքի (X—XIII դդ.) շինությունները։ Վանքի գլխավոր եկեղեցին՝ կաթողիկեն, գմբեթավոր սրահ է՝ կառուցված կարմիր տուֆից։ Երկրաշարժից ավերվել է եկեղեցու աղոթարանը, կրող պատերին կան ուղղաձիգ լայն ճաքեր։ Նույնատիպ վնասվածքներ կան նաև Հառիճի վանքի, Օձունի հուշարձանախմբերում, Կամսարականների ամրոցում։ Հառիճի վանքը (X—XIII դդ.) Հայաստանի միջնադարյան վանքային համակառույցներից է։ Երկրաշարժի հետևանքով վանքի կաթողիկե խաչագմբեթ եկեղեցու (Ս. Աստվածածին) գմբեթի վրա ողալի ճաքեր են առաջացել։ Հառիճի հուշարձանախմբի մեջ են մտնում նաև մեծ և փոքր գավիթները, որոնք երկրաշարժից ավերվել են։ Վանքի թաղածածկ քաղաքացիական շինությունների պատերին սեյսմիկ ցնցումներից ուղղաձիգ ճաքեր են առաջացել։

Օձունի տաճարը Հայաստանի գմբեթավոր բազիլիկաներից է (VI—VII դդ.)։ Այս հուշարձանն ունի արևելքից արևմուտք ձգված ուղղանկյուն հատակագիծ, որն ընդգրկում է աղոթասրահ, եկեղեցին երեք կողմից շրջապատող արտաքին սրահը՝ երկայնական թևերի սյունակով և բաց խորանով։ Եկեղեցին աչքի է ընկնում պարզ, հստակ ծավալներով, ներդաշնակ համաչափություններով, բարձր վարպետությամբ կատարված նրբին և բազմաթեմա քանդակներով։ Օձունի տաճարը դիմագրավել է երկրաշարժի ուժին, միայն պատերին կան ուղղաձիգ ճաքեր։ Ահեղ երկրաշարժը ավերակի վերածեց Գյուլագարակի եկեղեցին (XIX դ.), Լեռնակերտ գյուղի միանավ բազիլիկան (IV—V դդ.), որի ծածկը վերականգնվել էր XIX դ.։

340 խմ ծավալով փլվեցին Լոռե բերդի պատերը։ Լոռե բերդաքաղաքը հիմնադրվել է Անիի Բագրատունիների Դավիթ Անհողին թագավորի կողմից X—XI դդ.։ Ինչպես միջնադարյան բերդերից շատերը, Լոռեն ևս բաղկացած է միջնաբերդից, շահաստանից և արվարձանից։ Միջնաբերդի պարիսպը 214 մ երկարություն ուներ։ Լուրջ փորձությունների են ենթարկվել նաև Կեչառիսի, Հաղպատի, Սանահինի վանքային համակառույցների շինությունները (X—XIII դդ.)։ Վնասվածքներ է ստացել Կեչառիսի խաչագմբեթ մեծ եկեղեցու թմբուկը։ Երկրաշարժի հեռավոր ալիքները վնաս են հասցրել նաև Մակարավանքին, Գոշավանքին, Կիրանց վանքին, Աշտարակի Կարմրավոր եկեղեցուն։ Հիմնովին ավերվեցին Սպիտակ քաղաքը և նրա մերձակա գյուղերը՝ բազմաթիվ բնակելի և պատմամշակութային շինություններով։

Մեծ ավերածություններ առաջացան նաև Գյումրի քաղաքում։ Պետության կողմից հատուկ հսկողության տակ է վերցված Գյումրիի պատմամշակութային «Կումայրի» արգելոցը։ Այստեղ ժողովրդական ճարտարապետության 1672 հուշարձաններ կան՝ հասարակական շենքեր, թանգա-

բանները, պատկերասրահները, դեղաղիտական դաստիարակության կենտրոն, բնակելի տները։ Խնդիրը առաջնահերթ է՝ պահպանել Գյումրիի հին, բնակելի ֆոնդը։ «Կումայրիի» պատմամշակութային արգելոցի (220 հա) տարածքում պետական պահպանության տակ գտնվող 1672 հուշարձաններից 1227-ը բնակելի տներ են, որոնք հիմնականում կառուցվել են XIX դ. երկրորդ կեսին։ 1227 բնակելի տներից 1072-ը մասնավոր են, 155-ը՝ պետական։ Երկրաշարժի հետեանքով ամբողջապես ավերվել են պատմամշակութային 38 շենք, կիսավեր են 222-ը, վթարային վիճակում են 460-ը։ Զանազան վնասվածքներ են ստացել 426 շենք։ Մասնավոր աներից 81-ը գտնվում են բարվոք վիճակում։

«Կումայրի» արգելոցի տարածքի 1—1,5 հարկանի բնակելի տները կառուցված են բնական քարից և հիացնում են ճակատային մասի կոլորիտով (շնորհիվ բազմագույն տուֆի կիրառման), պատուհանների ռիթմիկ դասավորությամբ, բակ տանող կամարաձև դարպասներով։ Այդ ամենը վկայում է ժողովրդական վարպետների սնվիճելի տաղանդի, քարի դեղարվեստական մշակման արվեստին տիրապետելու մասին։ Այդ բնակելի տների թվին են պատկանում նեոկլասիցիզմի ոճով կառուցված Մուսխի Ավագի (1870 թ.), Զիթողցյանների (1872 թ.), Յուզբաշյանների (1873 թ.), Գրիգորյանների (1883 թ.) և Վանեցյանների (1886 թ.) տները, մենատների մի ամբողջ շարք՝ գլխավորապես կենտրոնացած ոչ միայն քաղաքի կենտրոնում, այլև Ալեքսանդրյան փողոցում։ Շինարարության մեջ լայն կիրառում է դտել սև տուֆը։ XIX դ. վերջին քաղաքում կառուցվել են նոր եկեղեցական շինություններ։ Անիի կաթողիկե տաճարի ձեր վերարտադրվեց Ամենափրկիչ եկեղեցում՝ 1873 թ., որը, սակայն, երկրաշարժի ժամանակ ամբողջապես ավերվեց։ Պահպանվել է միայն եկեղեցու արևելյան պատը՝ աղոթարանի հետ։ Ավերվել են նաև Սուրբ Նշան եկեղեցու գանգակատունը, հյուսիսային պատի քիվը։ Սուրբ Աստվածածնի Յոթ վերք եկեղեցին ևս վնասվեց։ Ընկան երկու ռոտոնդաները, զանգակատունը, մասամբ ավերվեց տանիքը։ Պլպլան ժամը վնասվածքներ չի ստացել։

Գյումրի կենտրոնի՝ XIX դ. կառուցված հասարակական և ուսումնական շինությունները երկրաշարժի հետևանքով տարբեր վնասվածքներ են ստացել։ Երկրաշարժի հետևանքով ամբողջովին ավերվեցին Շիրակի, Լոռու, Արագածոտնի մարզերի պատմության և մշակույթի բազմաթիվ հուշարձաններ։

Աղետի գոտու հուշարձանների վիճակը երկրաշարժից հետո այսպիսին է.

Թիվ	Քաղաք, մարզ	Հուշարձանների քանակը	Տուժած հուշարձաններ			
			ընդամենը	ամբողջապես ավերվել են	կիսավեր	մասամբ ավերված
1	Գյումրի	1672	1591	50	822	719
2	Լոռի	2180	280	43	122	115
3	Շիրակ	1325	163	32	46	85
4	Տավուշ	1184	55	1	18	36
5	Արագածոտն	963	86	13	29	44
6	Կոտայք	470	17	—	2	15
7	Գեղարքունիք	471	18	—	5	13
	Ընդամենը՝	8545	2210	139	1044	1027

Հայաստանի կառավարությունը քննարկել է աղետի գոտու պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման ու պահպանման հար-

ըր։ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչությունը երկրաշարժի գոտու առանձին մարզերում հիմնել է հատուկ գիտաարտադրական արհեստանոցներ («Գյումրի», «Գուգարք», «Տավուշ», «Արագածոտն»)։

Մեծ ուշադրություն է դարձվում նաև վերականգնման գծով միջպետական կապերին։ Երկրաշարժից հետո ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատվիրակությունը համապատասխան ուսումնասիրություններ է կատարել աղետի գոտում։ Պատվիրակության անդամները առաջարկել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների հետ վերականգնել 12 ճարտարապետական հուշարձան, կազմակերպել Հայաստանի մասնագետների վերապատրաստում, ինչպես նաև Հայաստանին տրամադրել անհրաժեշտ մեխանիզմներ և սարքավորումներ։

Իրենց ծառայություններն են առաջարկել Իտալիայի Էմիլ-Ռոմանիի մշակութային արժեքների ինստիտուտը, Վենետիկի համալսարանի ճարտարապետության ինստիտուտը, Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի և Հռոմի համալսարանի ճարտարապետության ամբիոնները։ Իտալական պատվիրակությունը առաջարկել է վերականգնել Երերույքի բազիլիկան և Մարմաշենի վանքային համալիրը։ Նույնատիպ առաջարկություններ են կատարել նաև Բուլղարիայի Հանրապետությունը, Գալուստ Կյուլպենկյանի ֆոնդը (Իսպանիա)։

Արտասահմանցի մասնագետների աջակցությամբ նախատեսված է վերականգնել պատմության և մշակույթի հետևյալ հուշարձանները. Մարմաշենի վանքը, Երերույքի բազիլիկան, Կեչառիսի վանքը, Թալինի կաթողիկե եկեղեցին, Մակարավանքը (XI—XIII դդ.), Գոշավանքը (XII—XIII դդ.), Հաղպատի վանքը (X—XIII դդ.), Արթիկի Աստվածածին եկեղեցին (VI—VII դդ.), Կոբայրավանքը (XI—XIII դդ.), Ամբերդի ամրոցը (IX—XIII դդ.), Կամսարականների ամրոցը (VII դ.) և Գառնիի ամրոցը (I դ. մ. թ. ա.)։

«Երկիր և մշակույթ» հայկական կազմակերպության ֆինանսական միջոցներով վերակառուցվել է Սպիտակի Գոգարանի (IV դ.) XIX դարում վերականգնված գործող եկեղեցին։ Անհատ ձեռնարկողի ֆինանսական աջակցությամբ Գյումրիում վերականգնվել են Սև ժամի թմբուկը և ռոտոնդան։ Սակայն երկրաբանական բարդ կառուցվածքի պատճառով լուրջ դժվարությունների հետ է կապված Գյումրիի Ամենափրկիչ եկեղեցու վերականգնումը։ Ամենափրկիչը Գյումրիի խորհրդանիշն է, և քաղաքի հատակագծային կերպարը ամբողջացնելու համար օրգանական անհրաժեշտություն է այդ եկեղեցու վերականգնումը։ «Կումայրի» պատմամշակութային արգելոցում վերականգնվել են որոշ շենքեր՝ առանց ճարտարապետական կերպարի փոփոխման։

Արագածոտնի մարզի Աստվածընկալի վանքի վերականգնման գործին մեծ օգնություն է ցուցաբերում սփյուռքահայ համայնքը։ Ծավալական աշխատանքներ են տարվել Կեչառիսի վանքում, որը փլուզության է ենթարկվել նաև 1827 թ. երկրաշարժի ժամանակ։ Ամբողջությամբ վերականգնվել է Սանահինի վանքի հռչակավոր գավիթը (1210 թ.), ավարտվում է վանքի Մագիստրոսի ճեմարանի վերականգնումը։ Ընթացքի մեջ են Գոշավանքի գավթի ծածկի վերականգնման աշխատանքները։ Գավթի [illegible] վրա ժամանակավոր ծածկ է դրվել։ Գառնահովտի եկեղեցին վերականգնվում է Անգլիայի հայ համայնքի օգնությամբ, իսկ Օձունի եկեղեցու և Հաղպատի վանքի վերականգնման գործը ստանձնել է Էջմիածնի Մայր Աթոռը։

2001 թ. լրանում է Հայաստանի քրիստոնեության ընդունման 1700-ամյակը։ Ցանկալի է, որ այդ մեծ տարեթիվը դիմավորենք մեր պատմության վկաներին՝ հուշարձաններին նոր կյանք պարգևած։

СОСТОЯНИЕ ПАМЯТНИКОВ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ В ЗОНЕ БЕДСВИЯ

А. В. УЛИХАНЯН

Р е з ю м е

Как показало исследование, нанесен значительный ущерб памятникам истории и культуры, находящимся в зоне бедствия и приграничных областях.

В зоне бедствия находится 8545 исторических памятников, из которых полностью разрушены 139, а пострадало всего 2210.

Многие памятники, составляющие «Золотой фонд» культуры Армении, разрушены.

Правительство Армении организовало работу по реставрации и консервации памятников истории и культуры, находящихся в зоне стихийного бедствия.

Большое внимание уделяется также межгосударственным связям по линии реставрации.